

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎԱԵՓԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻԴԵԱԼԸ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅ
ՄԱՍՈՒԼՈՒՄ**

**Ժ.01.06. - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՂԱՎԻԹ ՎԱԿԻՄԻՐԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

ԱՂԱԼՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ

բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՆԵ ԷՂԻԿԻ

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան


Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14³⁰-ին,
ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՅ-ի՝ գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի
նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլ-
տետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր



Ա. Ա. ՄԱՎԱՐՅԱՆ

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Չասարակական իդեալի փոխակերպումները մամուլում այն ազդակներն են, որոնք հարուստ նյութ են տալիս հասարակական տեղաշարժերը, ազգային գաղափարախոսության և հասարակական գիտակցության փոխակերպումները հասկանալու համար: Իդեալը փոխկապակցված է հասարակական կյանքի տարբեր ուղղությունների հետ՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլն: Ուստի հատկապես անցումային հասարակություններում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց փոխակերպումներ են տեղի ունենում հասարակական գիտակցության մեջ: Այդ իրողության դրսևորումներից են նաև հասարակական իդեալի փոխակերպումները: Արդյունքում՝ ներկայումս գործ ունենք ավանդական և նոր ձևավորվող իդեալների միջև ընթացող հակամարտության հետ:

Մեր կողմից իբրև հետազոտության նյութ ընտրվել են 2001-2014 թթ. ժամանակահատվածում լույս տեսած պարբերականների հրապարակումները, որոնց ուսումնասիրությունը հասարակական իդեալի փոխակերպումների նոր շերտեր բացելու հնարավորություն է տալիս: 2000-ականների երկրորդ կեսից սկսած՝ հայաստանյան լրատվադաշտը թևակոխեց էլեկտրոնային շրջափուլ, ուստի ուսումնասիրել ենք նաև այդ ժամանակաշրջանում իրենց գործունեությամբ առավել աչքի ընկած համացանցային լրատվամիջոցները: Ժամանակաշրջանն ընտրվել է՝ հաշվի առնելով այն, որ հիմնականում այս տարիներին են ձևավորվել մամուլ-հասարակություն-իշխանություն նոր հարաբերությունները:

Մյուս կողմից անցումային փուլում գտնվող հասարակություններին բնորոշ արժեհամակարգային փոփոխությունների արդյունքում հայ հասարակությունը իդեալի որոնումների մեջ է, նկատվում է իդեալների ճգնաժամ: Սակայն հասարակական իդեալի ճգնաժամային իրավիճակից ելքի որոշ ուղիներ ուրվագծվում են, ի հայտ են եկել քաղաքացիական հասարակության ձևավորման լուրջ նախանշաններ: Եվ փաստ է այն, որ հասարակական իդեալի՝ գոյություն ունեցող ճգնաժամից ելքի հիմնական ճանապարհ կարող է դառնալ հենց քաղաքացիական հասարակության կայացումը:

Թեմայի արդիականությունը և գործնական նշանակությունը

Չասարակական իդեալի խնդրի ուսումնասիրությունը հրատապ և արդիական է հատկապես այն առումով, որ ժամանակակից գլոբալացման գործընթացներում Չայաստանը հայտնվել է հոգևոր արժեքների ճգնաժամային կացության մեջ, և իդեալների հստակեցումն անհրաժեշտ է՝ իրավիճակից դուրս գալու ուղիներ գտնելու նպատակով: Այս առումով ուսումնասիրության համար հարուստ նյութ են տրամադրում 2001-2014 թթ. լույս տեսած պարբերականների հրապարակումները: Դրանցում առաջ քաշված խնդիրները կապված են հետխորհրդային հասարակարգին անցնելու և ըստ այդմ՝ նոր իդեալների որոնման, խորհրդայինից տարբեր նոր հասարակարգին բնորոշ իդեալները դեռևս լիովին չորդեգրելու փաստի հետ: Ուստի հասարակական իդեալի փոխակերպումները մամուլում դիտարկելը կօգնի ավելի լավ հասկանալ հասարակական-քաղաքական, ազգային-գաղափարախոսական գործընթացները, ամբողջական պատկերացում կազմել հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին: Ընդհանրապես

անցումային հասարակությանն սպառնում են մի շարք վտանգներ՝ ընդհուպ ազգային անվտանգությանն առնչվող, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ է դրական իդեալներ ներարկել հասարակությանը՝ օգտագործելով ՁԼՄ-ների լայն հնարավորությունները: Հասարակական իդեալը հզոր զենք է ինչպես տեղեկատվական պատերազմներին նախապատրաստվելու, այնպես էլ հասարակական գիտակցությանն ու կարծիքին սպառնացող վտանգների դեմ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու համար, որոնք ուղղված են մարդկային բարոյականության բարձր արժեքների վրա հիմնված նոր հասարակարգի ձևավորմանը:

Ուսումնասիրության առարկան, նպատակը և խնդիրները

Հասարակական իդեալների ստեղծումն ու տարածումը դիտարկելով որպես հետխորհրդային հայ մամուլի կարևորագույն նպատակ՝ փորձել ենք 2001-2014 թթ. լույս տեսած հրապարակումների միջոցով բացահայտել հայ հասարակության շրջանում առավել լայն տարածում ունեցող իդեալներն ու հակաիդեալները: Ատենախոսության նպատակն է արդի հայ մամուլի օրինակով ուսումնասիրել մեր երկրում հետխորհրդային տարիներին հասարակական իդեալի անցած ճանապարհը, նրա դրսևորման յուրահատկությունները, հասարակական-քաղաքական նոր իրողությունների պայմաններում վերջինիս ձևավորման ընթացքն ու զարգացման միտումները: Ըստ այդմ՝ առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

1. Իդեալի մասին պատկերացումները տեսական գրականության մեջ,
2. Իդեալը՝ որպես հասարակական գիտակցության վրա ազդելու միջոց և տեղեկատվական պատերազմի հզոր զենք,
3. Գլոբալացման գործընթացների ազդեցությունը հասարակական իդեալի փոխակերպումների վրա և դրանց դրսևորումները մամուլում,
4. Հայ հասարակության շրջանում գոյություն ունեցող հասարակական իդեալի ճգնաժամի արտահայտությունները (հասարակական անորոշություն, կարոտախտ, նոր իդեալների բացակայություն, իդեալի որոնումներ և այլն) մամուլի տեսադաշտում,
5. Իդեալի ճգնաժամի հաղթահարման ուղիները,
6. Քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ հասարակական իդեալի ճգնաժամից ելքի հիմնական ճանապարհ:

Թեմայի մշակվածությունը և աշխատանքի գիտական նորույթը

Իդեալի վերաբերյալ անդրադարձերի հանդիպում ենք օտարազգի և հայ տեսաբանների՝ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, լրագրագիտության ոլորտներին վերաբերող ուսումնասիրություններում: Մասնավորապես հայ տեսաբաններից Գ. Հարությունյանի կարծիքով՝ հասարակարգերի փոփոխությունը, ի թիվս բազմաթիվ այլ հետևանքների, մեծ ազդեցություն է գործում նաև մարդու աշխարհընկալման, անձնական ու հասարակական իդեալի վրա՝ փոխելով վերջինիս նկարագիրը, հիմնական բնութագրերն ու գործառույթները՝:

¹ Տե՛ս **Հարությունյան Գագիկ**, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 29:

խնդրին անդրադարձել է նաև եղ. Հարությունյանը: Համաձայն նրա տեսության՝ ցանկացած հասարակություն բաղկացած է չորս հիմնական ենթահամակարգերից՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է հասարակության միավորման, որոշակի նպատակների հասնելու, համակարգի ներսում տեսակի, կերպի, ձևի, արժեքների պահպանման իր գործառույթը²: Բոլոր գործառույթների հիմքում կարելի է տեսնել որևէ իդեալ, որ ժամանակ առ ժամանակ ձեռք է բերում առաջնային դերակատարություն, հետո իր տեղը զիջում մյուսին:

Հասարակական իդեալի մասին ուսումնասիրությունների կարելի է հանդիպել նաև հոգեբանության բնագավառում: Հայ հոգեբաններից այս խնդրին անդրադարձել է Ալ. Նալչաջյանը: Նա հասարակական իդեալը կապում է մադկանց հասարակական գիտակցության հետ, իսկ վերջինս, ըստ ուսումնասիրողի, բնորոշում է տվյալ հասարակության ազատության, բարեկեցության, ժողովրդավարության աստիճանը³:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ փորձ է արվում հասարակական իդեալին առնչվող հարցերն ուսումնասիրել լրագրագիտության տեսանկյունից: Առաջին անգամ ժամանակակից հայ մամուլը դիտարկվել է որպես հասարակական իդեալների ստեղծման միջոց, հարթակ: Մեր հետազոտած կողմից դիտարկվող ժամանակաշրջանը (2001-2014 թթ.) հարուստ նյութ է տալիս՝ պատկերացում կազմելու հետխորհրդային հայ մամուլում խորհրդային զարգափարախոսության քննադատության, անկախության տարիներին հայ հասարակության որդեգրած իդեալների մասին, մատնանշելու ներկա ճգնաժամային իրավիճակից ելքի ճանապարհներ:

Չեղարկության տեսական-մեթոդաբանական հիմքը

Ատենախոսությունը գրված է լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներով և սկզբունքներով: Ըստ անհրաժեշտության՝ կիրառված են նյութի հետազոտման պատմաբանական, համեմատական, վերլուծական և համադրական մեթոդները: Իդեալի փոխակերպումներին անդրադառնալիս հիմք ենք ընդունվել փիլիսոփայական, մշակութաբանական, գիտական մի շարք հիմնադրույթներ: Հասարակական իդեալի փոխակերպումները մեկնաբանելիս հղում ենք արել նաև արևմտյան տեսաբանների մշակած տեսություններին ու մեթոդներին:

Ուսումնասիրության փորձաքննությունը

Ատենախոսությունը քննարկվել է պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ-ի Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի պատմության և տեսության ամբիոնում: Աշխատանքի որոշ հատվածներ առանձին հոդվածներով տպագրվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում:

² Տե՛ս **Հարությունյան եղ.**, Անցումային հասարակությունը՝ որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000, էջ 180:

³ Տե՛ս **Նալչաջյան Ալբերտ**, Սոցիալական հոգեբանություն, «Ձանգակ», Երևան, 2004, էջ 241:

Կառուցվածքը և բովանդակությունը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի գիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը, արդիականությունը, պարզաբանվում են հետազոտության նպատակը, խնդիրները: Ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքերը, սկզբունքները, որոնք հնարավորություն են տվել նյութը մատուցել համակարգված մոտեցմամբ:

Գլուխ առաջին

Հասարակական իդեալը արդի տեղեկատվական քաղաքականության համատեքստում

Այս գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից: Սահմանել ենք, թե ինչ է իդեալը. այն ներկայացվել է որպես հասարակական գիտակցության վրա ազդելու արդյունավետ միջոց և տեղեկատվական պատերազմի հզոր զենք: Քննել ենք հասարակական իդեալի զարգացման ընթացքը՝ ըստ պատմական ժամանակաշրջանների, ներկայացրել նշանավոր տեսաբանների՝ թեմային առնչվող աշխատանքներ և տեսություններ, ինչպես նաև հասարակական իդեալի վերլուծության հիմնական մոտեցումներն ու մեթոդները: Առաջին ենթագլուխը վերնագրել ենք **«Իդեալի պատմական և արդի ընկալումները»**, որտեղ համառոտ ներկայացրել ենք իդեալի մասին պատկերացումները, իդեալի կապը հասարակական-քաղաքական գործընթացների հետ: Նախ՝ տրվել է հասարակության, այնուհետև մատնանշվել իդեալի վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումները: Մասնավորապես կանգ ենք առել այն հարցի վրա, թե ինչ ազդեցություն է ունենում հասարակարգերի փոփոխությունը հասարակական իդեալի փոխակերպումների վրա: Այսպիսի իրավիճակում հայտնվեց հայ հասարակությունը խորհրդային Միության փլուզումից հետո: 1991 թվականին Հայաստանի անկախացումից հետո, հայ հասարակության աչքի առաջ սկսեցին փոխակերպվել դարերից եկող ավանդույթները, ազգային իդեալները: Տեղեկատվական հայ հասարակությունը դարձավ նոր իդեալների կրող: Նախկին՝ խորհրդային հայ հասարակության իդեալները «պտտվում էին» արտադրություն, արտադրական առաջընթաց հասկացությունների շուրջ: Հասարակական շարժիչ ուժի դերում էին գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի, աշխատանքի բաժանման հասարակական իդեալները: Ներկայիս տեղեկատվական հասարակություններում գերակշռող են այլ իդեալներ, որոնք կապված են տեղեկատվական առաջընթացի, տեղեկատվական արդյունաբերության հետ: Հասարակական իդեալն ունի մի շարք գործառույթներ: Կարևորագույններից են սոցիալական, մոտիվացիոն և հաղորդակցական գործառույթները⁴: Հասարակական իդեալը յուրօրինակ կողմնացույց է, որ մատնանշում է պետության և հասարակության զարգացման ուղին: Նրա հիմնական խնդիրն է ազգի համար ճգնաժամային վիճակներում հասարակական իդեալը գործողության մեջ դնել որպես դրական գա-

⁴ Տե՛ս **Давидович В. Е.**, Социальная справедливость: идеал и принцип деятельности, М., Политиздат, 1989, стр. 255:

ղափարախոսություն, որի հիմնական բաղկացուցիչը պետք է դառնան հասարակության մեծամասնության կողմից ընդունված՝ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ռազմավարական գարգացումները: Դատելով հայաստանյան ՋԼՄ-ների հրահարակունմաներից՝ կարելի է նկատել, որ լուրջ հակամարտություն կա երկու տարբեր հասարակական իդեալների միջև: Մեկը ավանդականն է, որ գերադասում է հասարակական գաղափարների իրագործումը սոցիալական արդարության, ուժեղ պետականության ճանապարհով: Մյուսը ժամանակակիցն է, որ նախընտրում է իշխող ընտրախավի պահանջումների բավարարումը դասական լիբերալիզմին բնորոշ գաղափարների միջոցով՝ որքան կարելի է ավելի հարուստ լինել, հեռու մնալ հասարակական վերահսկողությունից, կորպորատիվ բարոյականությունը և այլն: Այդ իդեալներից յուրաքանչյուրը ստեղծում է ինքնավար հաղորդակցային տարածություն, որը պետությանն ու հասարակությանը թույլ չի տալիս լիարժեք գործելու և գարգանալու:

«Իդեալը՝ հասարակական գիտակցության վրա ազդելու միջոց և տեղեկատվական պատերազմի հզոր զենք» ենթազվիտում ներկայացրել ենք, թե ինչ է հասարակական գիտակցությունը, և իդեալն ինչ ազդեցություն ունի դրա վրա: Ամցումային փուլում գտնվող ժամանակակից հայ հասարակության համար տեղեկատվական ներգործությունը առավել քան ակնհայտ է: Այդ ներգործությունը ոչ միշտ է, որ ունենում է դրական հետևանքներ: Այս հարցում մասնավորապես էական է այն, թե տեղեկատվության տարածման դեպքում Հայաստանի պատմությունը, աշխարհաքաղաքական դիրքն ու պատմական արժեքներն ինչպես են ներկայացվում: Կան հասարակական գիտակցության վրա ազդող բազմաթիվ գործոններ: Մեր կարծիքով՝ դրանք հիմնված են որոշակի հասարակական իդեալների վրա, որոնք կամ ժամանակի ընթացքում արմատավորվել են հասարակական գիտակցության մեջ և հասարակությանը թույլ չեն տալիս առաջ գնալ, կամ առաջացել են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում: Օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջանից եկող մեկ անձի և մեկ գաղափարի շուրջ պատմվող հակաիդեալը ժամանակակից հայ մարդուն թույլ չի տալիս լիովին ընդունելու ժողովրդավարության հիմնարար արժեքները: Հասարակական գարգացմանն ու ժողովրդավարական արժեքների տարածմանը խոչընդոտում է նաև խորհրդային համակարգից ժառանգված կառավարման բուրգային համակարգը: Հասարակական գիտակցության վրա մեծ ազդեցություն է թողնում սոցիալական ապահովվածության ձգտելու իդեալը, որ առաջ է բերում սոցիալական անհավասարության խնդիր: Այդ պայմաններում միանգամայն բնական է դառնում մարդու՝ ամեն գնով հարստություն ձեռք բերելու ձգտումը: Հասարակական իդեալների այս գլխիվարը շրջման պատճառով լուրջ փոփոխությունների է ենթարկվում նաև հասարակական գիտակցությունը, որ հիմնված է հասարակական կարծիքի վրա: Փոխակերպվող գաղափարներն ու իդեալները ոչ միշտ և հաճախ ոչ «հարկավոր» մարդկանց կողմից են ենթարկվում կայունության փորձարկման. խոսքի ու գործի տարբերությունը հասնում է սոսկալի չափերի: Երբ կեղծ գիտակցության մասշտաբները մոտենում են կրիտիկական սահմանի, ամբոխացած մարդկանց վարքին քաղաքական տարբեր մեքենայություններով ցանկալի ուղղություն հաղորդելը դառնում է զուտ տեխնիկայի հարց⁵: Ավելին, երբեմն ականատես ենք լինում սե-

⁵ Տե՛ս **Ермаков Ю.А.**, Манипуляция личностью: Смысль, приемы, последствия, Екатеринбург, 1995, стр. 54, տե՛ս նաև **Кара-Мурза С.Г.**, Манипуляция сознанием, М., 2000, стр. 89.

փական, տեղական նախաձեռնությամբ իրականացվող տեղեկատվական գործողությունների, որոնք ակնհայտորեն վտանգում են մեր ազգային անվտանգությունը: Նման կարգի տեղեկատվական գործողությունները իրականության մեջ ստացել են «տեղեկատվական պատերազմ սեփական ժողովրդի դեմ» որակումը⁶:

Օգտագործելով վերոնշյալ մեթոդները, տեսությունները և տեսաբանների ուսումնասիրությունները՝ հաջորդ ենթազվխում (**«Գլոբալացում և հասարակական իդեալի փոխակերպում»**) քննության ենք ենթարկել նաև այն, որ գլոբալացման երևույթի⁷ ազդեցության ներքո ընթացող համակարգային փոփոխությունները հանգեցրին որոշ արմատացած պատկերացումների վերափնաստավորման: Ներկայումս տեղի ունեցող գլոբալացման գործընթացները, որոնք ներթափանցել են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, մեծապես ազդում են հասարակական իդեալի կերտման, դրա փոխակերպման վրա: Բացառություն չէ տեղեկատվական համակարգը, որտեղ ևս նկատվում են այդ փոփոխությունները: 20-րդ դարի պատմությունը ցույց տվեց, որ հասարակական իդեալի վերացման հիմնական միջոցները ինֆորմացիոն և հաղորդակցային տեխնոլոգիաներն են, որոնք լուրջ ազդեցություն կարող են գործել հասարակական գիտակցության վրա: Նախորդ հարյուրամյակի կարևորագույն հայտնագործություններից մեկն էլ այն է, որ ամեն մի հասարակական արժեք կարելի է արժեզրկել ոչ միայն իրականության մեջ, այլև վիրտուալ հարթության վրա՝ դրան տալով բացասական իմիջ և հասարակական ոչ վտարակնիշային կարգավիճակ: Ահա հենց այստեղ է, որ օգտագործվում են ԶԼՄ-ներն ու հաղորդակցային տեխնոլոգիաները: Դրանք օգտագործվում են որպես զենք՝ հասարակության շրջանում ձևավորելու համար կարծիք և իդեալներ, օրինակ, վստահելի և ոչ վստահելի բանկերի, ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական ռեժիմների, լիբերալ և դիկտատոր նախագահների մասին և այլն: Անհատի բարոյական վարքագծի ձևավորման վրա մեծապես ազդում է հասարակական կարծիքը, որ խրախուսանքի կամ պարսավանքի ձևով գնահատելով մարդկանց բարոյական արարքները՝ ստիպում է նրանց գործել որոշակի ուղղությամբ⁸: Հասարակական կարծիքը կարող է անհատի վրա նպաստավոր ազդեցություն ունենալ, եթե ունի բարոյական ներուժ, առաջնորդվում է հումանիզմի գաղափարով: Հասարակական կարծիքը մի կողմից ունի սոցիալական կարգավորման ֆունկցիա, մյուս կողմից՝ բացասական երևույթների դեմ պայքարելու առաքելություն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ այն հասարակություններում, որտեղ թույլ են հասարակական կարծիքի սոցիալական հսկողության ֆունկցիաները, այնտեղ ավելի շատ են կատարվում անբարո արարքներ⁹: Հասարակական կարծիքի հիմքում ընկած է ազգային գաղափարախոսությունը: Այն որոշակի փաստաթուղթ կամ

⁶ Տե՛ս **Гундаров И.А.** Духовное неблагополучие и демографическая катастрофа, Общественные науки и современность, 2001, И5.

⁷ Տե՛ս **Հարությունյան Գագիկ**, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում, Երևան, 2003, էջ 12:

⁸ Տե՛ս **Уледов А. К.**, Общественное мнение советского общества, М., Соцэкгиз, 1963, տե՛ս նաև **Герасимов В. М.**, Формирование и функционирование общественного мнения (Опыт политико-психологического и акмеологического исследования), Дис...д-ра психол.наук, М., 1994.

⁹ Տե՛ս **Герасимов В. М.**, Общественное мнение в зеркале политической психологии, М., Луч, 1995.

սահմանում չէ, այլ բնույթով բազմաշերտ է և ներառում է բազմաթիվ բնագավառներ: Ազգային գաղափարախոսության հասարակության շրջանում տարածելու գործում լրատվամիջոցներն ունեն մեծ առավելություն, առաջին հերթին այն հարթակը, որտեղ ծնվում են ազգապաշտպան իդեալները: Հրատապ խնդիր է ուսումնասիրել այն, թե ազգային գաղափարախոսության պահպանման առումով ինչ վիճակում է Հայաստանը: Կարելի է լսել կարծիքներ, թե մենք կորցրել ենք ազգային դիմագիծը, հաճախ քայլեր ենք անում, որոնք հակասում են ազգային գաղափարախոսությանը: Այս խնդիրները լայնորեն լուսաբանվում են մամուլում: Օրինակ՝ «Ազգ» օրաթերթում Արսեն Բաղդասարյանի «Ընտրություն կատարելու ժամանակը» հոդվածի առանցքային թեման արցախյան պատերազմն է: Հոդվածագիրը, համադրելով փաստերն ու իրադարձությունները, խնդիրը դիտարկելով ազգային անվտանգության համատեքստում, կատարում է հետևյալ եզրահանգումը. «Հաղթելու ուղին է, որ միակն է զենքով պաշտպանել հայրենի հողը, քանի որ փորձը ցույց է տալիս, որ մնացած բոլոր ասպարեզներում շարունակ պարտություն ենք կրում»¹⁰: Այսպիսի հրապարակումներն, անշուշտ, նպաստում են ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու ձևավորում ազգային գաղափարախոսություն, հասարակությանը ներարկում ազգապահպան իդեալներ: Իսկ հասարակական իդեալն ունի նաև կանխարգելիչ գործառույթ: Բայց նաև կարևոր է պարզել, թե որտեղ են թաքնված ազգային ինքնության կորստի, հասարակական իդեալների փոխակերպման և հասարակության խեղման հիմքերը, և պարզ կդառնա, որ դրանց հիմնական պառճառները համակարգային են, քանի որ 20-րդ դարի վերջին տասնամյակները բեկունային էին: Այս ժամանակահատվածից ի վեր հասարակության շրջանում սկսեցին ակտիվանալ հակաիդեալները: Դրա պատճառներից էին նաև հասարակական համակարգային փոփոխությունները՝ Խորհրդային Միության փլուզում, Հայաստանի անկախացում, հերոսամարտ, իշխանափոխություն, դրան հետևող հասարակական անկում, քաղաքացիական հասարակության ձևավորում: Համակարգային փոփոխությունների շղթան շարունակվում է մինչև այսօր, ինչին զուգահեռ տեղի են ունենում հասարակական իդեալի փոխակերպումներ:

Գլուխ երկրորդ Հասարակական իդեալի ճգնաժամը և արդի հայ մամուլը

Ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնք նվիրված են հասարակական փոփոխություններին զուգընթաց հայ մամուլի դիմագծի փոփոխմանն ու հասարակական իդեալի՝ հետխորհրդային հայ մամուլում տարածված հիմնական մոտիվների քննարկմանը: Ներկայացրել ենք հասարակական գիտակցությունն ուղղորդելու համար մամուլի կողմից ստեղծված և օգտագործված տարաբնույթ իդեալներն ու հակաիդեալները: Այս իրողությունը հատկապես ակնառու է դառնում կարևոր քաղաքական իրադարձություններից հետո՝ Արցախյան հերոսամարտ, ՀՀ անկախության հռչակում, ՀՀ նախագահական ընտրություններ, քաղաքացիական շարժումների զարգացում: Մամուլի ուսումնասիրությունը փաստում է, որ հայ հասարակությունն այժմ կանգնած է իդեալների

¹⁰ Տե՛ս «Ազգ», լրագիր, Երևան, 1992, հոկտեմբերի 28:

ճգնաժամի առաջ: Պատճառն այն է, որ հետխորհրդային հայ հասարակությունը մի կողմից դեռ չի ձեռքբազատվել նախկին խորհրդային համակարգին բնորոշ իդեալներից, մյուս կողմից՝ դեռ լիովին չի որդեգրել նոր իդեալները: «**Հայ մամուլի դիմագիծը հասարակագրերի փոփոխության արդյունքում**» ենթազվառում ներկայացնում ենք, թե վերափոխումների հետևանքով Հայաստանում մամուլ-հասարակություն-իշխանություն կապի նոր առանձնահատկությունների ձևավորման պարագայում մամուլն ինչպես է իրագործում իր առաքելությունը: Մամուլը, որ մինչ այդ խորհրդային գաղափարախոսության, իդեալների տարածման ակտիվ հարթակն ու հաղորդիչն էր, նույն ջանասիրությամբ սկսեց նպաստել այդ նույն համակարգի և գաղափարախոսության քայքայմանը: Հասարակական-քաղաքական փոփոխությունների արդյունքում փոխվեցին նաև մամուլ-հասարակություն, մամուլ-քաղաքականություն հարաբերությունները: Հայաստանում երբեմն շրջանցվում են լրագրության սկզբունքային պահանջները, աճում է մամուլի կախվածությունը քաղաքական ուժերից, մեծանում է «պատվերով աշխատող» լրատվամիջոցների քանակը: Օրինակ՝ «Չորրորդ իշխանություն» թերթը ՀԱԿ-ի ոչ պաշտոնական խոսափողն է, «Երկիրը»՝ ՀՀԴ-ինը և այլն: Այս երևույթն, անշուշտ, կաշկանդում է մամուլի գործունեությունը, որն արտահայտվում է կանխակալ, ոչ օբյեկտիվ և երբեմն նաև խեղաթյուրված հրապարակումների ձևով: Խնդրի էությունը ունի նաև սոցիալական լուրջ ենթատեքստ: Լրատվամիջոցներից շատերը մեզանում ստիպված են այս կամ այն կազմակերպությունից, խմբակցությունից, անգամ առանձին անհատներից գոյությունը պահպանելու համար միջոցներ հայթայթել: ՁԼՄ-ները տնտեսապես անկախ չեն, քանի որ լրատվամիջոցը չի կարող իրեն նյութապես ապահովել, դեռ դաշտում կա մենաշնորհի, երբ միևնույն անձի ձեռքում են գտնվում տարբեր լրատվամիջոցներ: Այս ամենին հավելենք նաև վերահսկողությունը ՁԼՄ-ների նկատմամբ, ինչը պաշտոնապես գրաքննություն չի համարվում, սակայն պարունակում է գրաքննության շատ տարրեր: Լրատվամիջոցների, հատկապես հեռուստատալիքների նկատմամբ վերահսկողության մեծացումը դրսևորվեց 2002թ. «Նոյյան տապան» և «Ա1+» հեռուստատալիքների եթերազրկումով, ինչն արդեն ազդարարում էր Հայաստանում ՁԼՄ-ների անցնելիք ճանապարհի նոր փուլի մասին: Այդ պատճառով էլ ՀՀ լրատվադաշտի զարգացման 2002-2006թթ. ժամանակահատվածը համարվում է «բարիկաղավորում» և քարոզչականացում: 2000-ականների կեսերից հայաստանյան լրատվադաշտը թևակոխեց նոր՝ էլեկտրոնային շրջափուլ, որը դեռ չի արժանացել տեսաբանների ուշադրությանը: Այս շրջափուլի առանձնահատկությունն այն է, որ ավանդական լրատվամիջոցները՝ տպագիր մամուլը, ռադիոն, հեռուստաընկերությունը, իրենց տեղը գիջեցին էլեկտրոնային լրատվամիջոցներին, որոնց լսարանն օրեցօր ընդլայնվում է:

Հաջորդ ենթազվառում, որ վերնագրված է «**Հասարակական իդեալի փոխակերպումների արտացոլումը արդի հայ մամուլում**», նախ՝ անդրադարձել ենք փոխակերպվող հասարակության հայեցակարգին, որը հանգամանորեն ներկայացված է հայ տեսաբաններ Ն. Հակոբյանի, Գ. Սողոմոնյանի, Լ. Աբրահամյանի, Հ. Գևորգյանի, Է. Հարությունյանի և այլոց աշխատություններում¹¹: Արդի հասարակությունն

¹¹ Տե՛ս **Հակոբյան Ն.**, Փոխակերպվող հասարակության մեջ մարզինալության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, «Լրաբեր» N 2, էջ 3-7, տե՛ս նաև **Սողոմոնյան Գ.**, Անցումային հասարակության սոցիոնշակութային փոխակերպումները, Երևան 2005,

առաջնորդող իդեալների մասին պատկերացում կազմելու համար բավական է թերթել այդ օրերի մամուլը, և հասկանալի կդառնան հասարակական բոլոր տրամադրությունները: Հասարակական իդեալի այս մոտիվները հստակորեն արտացոլվում են ուսումնասիրվող ժամանակահատվածի հայ մամուլում: Ճգնաժամ ապրող հայ հասարակության շրջանում ներկայիս գերիշխող են հասարակական անորոշությունն ու փնտրտուքը: Հասարակության համար լուրջ հրամայական է ուն մանավելու խնդիրը: Գերիշխող են օտարի և յուրայինների իդեալները, երբ հասարակական տարբեր շերտեր միմյանց հետ փոխհարաբերություններում շեշտադրումը կատարում են «մենք»-ի և «դուք»-ի շրջանակներում: Տարածված են անտարբերության, կարոտախտի, պալատական մշակույթի հակաիդեալները: Նաև նկատելի է հասարակական անորոշություն, փնտրտուք: ՁԼՍ-ների բազմաթիվ անդրադարձեր կան օտարի և յուրայինի իդեալի վերաբերյալ: Օրինակ՝ «Առավոտ» օրաթերթի «Ոգեհարցություն» անցյալի մոտիվներով՝ հողվածում ներկայացվում է արդի հայ հասարակության բնութագիրը: Հեղինակն անդրադառնում է վերափոխումների ազդեցությանը հայ հասարակության ինքնագիտակցության վրա: «Պարզից էլ պարզ է,- գրում է նա,- որ հայաստանյան ներկա իրողությունները հասկանալու համար նախևառաջ հարկավոր է արձանագրել, որ մենք արդեն սովետիկուս չենք և դեռևս ժողովրդավար չենք, ինչպես հռչակված է սահմանադրությամբ և ամենօրյա խոսք ու զրույցում: Եվ մտավոր, հոգևոր, նույնիսկ ֆիզիկական այս ճողվածությունը արդեն «չենք»-ի ու «դեռևս չենք»-ի արանքում, պարտադրում է մտածողության և վարքի այնպիսի ձևեր, որոնք միաժամանակ հատուկ են սովետիկուսներին՝ յուրատեսակ ռենեսանս ապրող նախկին կոմսոմոլների, բազմների...»¹²:

Հասարակական իդեալների խեղաթյուրման, հասարակության իդեալներից զուրկ անդեն հավաքականության վերածվելու մտահոգիչ փաստն է արձանագրում «Ազգ» օրաթերթը: «Ազգային գաղափար» վերնագրով հողվածում զուգահեռներ են տարվում նախկինում հայ հասարակության շրջանում գործող իդեալների և արդի փուլում տարածված իդեալների միջև: Հողվածագիրը, վերլուծելով իրավիճակը, հանգում է հետևյալ եզրակացության. «1988-ի առաջնային գաղափարը Արցախի վերատիրումն էր, ապա ԱՆկախությունը, և այդ գաղափարները շեփորող ուժերը դրսևորվեցին իբրև համեմատաբար կենսունակ քաղաքական դաշտում: Այնուհետև հայությունն ունակ չգտնվեց կամ չհասկացավ կարևորությունը առաջադրելու նոր ազգային գաղափար, թեև այդպիսին կարող էին լինել ազատագրված տարածքների վերաբնակեցումը, հայրենադարձությունը... և, բնականաբար, չունեցավ նոր ժամանակներին համապատասխան հասարակական ընտրանի: Ո՛րն է այսօրվա ազգային գաղափարը»¹³: «Երկիրը» փոխակերպումները դիտարկում է քաղաքական համակարգում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում: Մասնավորապես համեմատության մեջ է դրվում խորհրդային «դեմոկրատական «ցեմտրալիզմը» հետխորհրդային «դեցեմտրալիզմի» հետ, և

էջ 144, **Հարությունյան Է.**, Անցումային հասարակությունը՝ որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Երևան, 2000, էջ 180:

¹² Տե՛ս «Առավոտ» օրաթերթ, 2004 թ., նոյեմբերի 26, տե՛ս նաև **Գալստյան Լիլիթ**, Ջնջել, սկսել նորից, «Երկիր», 2005, հունվարի 14, #1/1823/, **Օհանյան Միեր**, Փոխել պետության կեցվածքը, «Երկիր», հուլիս 15, 2005, #27/1849:

¹³ Տե՛ս «Ազգ», 2001, հունիսի 7:

փոխակերպումների գործընթացը բնութագրվում որպես «սովետներից դեպի տեղական ինքնակառավարում»¹⁴: Ուսումնասիրության առարկա դարձած շրջանի մասնուլը հիմնականում չի առաջնորդվում համընդհանուր ազգային գաղափարներով և չունի այն միասնական գաղափարական ուղղվածությունը, ինչը կարելի է իդեալ համարել: Օրինակ՝ թերթելով «Հայկական ժամանակ» և «Հայոց աշխարհ» պարբերականները՝ ընթերցողին կթվա, թե սրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր երկրներում, տարբեր հասարակություններում գոյություն ունեցող իրավիճակներ և իդեալներ¹⁵: Հասարակության շրջանում առկա փնտրտուքը, արժեհամակարգային փոխակերպումներն իրենց արտահայտությունն են գտնում նաև ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում: Ամենից շատ քննարկվող հարցերից է այն, թե Հայաստանն ի վերջո որ ուղղությամբ է գնալու՝ Եվրոպա, Ռուսաստան, թե՞ Ամերիկա: Այս հարցում էլ, բացառությամբ որոշ դեպքերի, մասնուլը հիմնականում առաջնորդվում է այն քաղաքական ուժերի գաղափարախոսությամբ, որոնք կանգնած են տվյալ լրատվամիջոցի հետևում: Օրինակ իշխանամետ մասնուլը հակված է ներկայացնելու եվրաինտեգրման զարգացման ուղին, մինչդեռ ընդդիմադիրները հակված են Հայաստանի զարգացման հեռանկարը տեսնել ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սերտացման մեջ¹⁶: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 2013 թվականի սեպտեմբերի 3-ից հետո, երբ Հայաստանը հայտարարեց իր՝ Մաքսային միությանն անդամակցելու ցանկության մասին:

ԶԼՄ-ների՝ քաղաքական ուժերի, այս կամ այն քաղաքական գործչի կամ ուժի իմիջի ձևավորման նպատակով օգտագործման դեպքում կիրառվում են տարատեսակ մեթոդներ: Արդյունքում իրավիճակը ներկայացվում է «ներկաների» և «նախկինների» պայքարի համատեքստում: Բնորոշ օրինակներից է լրագրողական հանրույթի շրջանակներում ընդունված «ընդդիմադիր և իշխանամետ մասնուլի պայքար» ձևակերպումը, երբ ընդդիմադիր կոչված մասնուլը գովաբանում է «նախկինների», իշխանամետը՝ «ներկաներին»: Այս պայքարի լավագույն օրինակներից է «Հայոց աշխարհ»-«Հայկական ժամանակ» կամ «Զորորդ իշխանություն» հակամարտությունը: «Հայոց աշխարհ»-ը ներկայացնում է նախկինների հասարակական ծանր նոստալգիան, որ արթնացրել են վերջին շրջանի «մեծաթիվ կատակլիզմները»: Որպես դրան հակահարված՝ «Հայկական ժամանակ»-ը ահազանգում է «ժողովրդի ձեռքից իշխանությունը խլած և վերադարձնել չջանկացող ապօրինի իշխանությունների» մասին¹⁷: Գերիշխող մյուս հակաիդեալը «անտարբերություն և հարմարվողականություն» երևույթներն են, որոնք ԶԼՄ-ներում դիտարկվում են տարբեր ոլորտներում՝ նշակութային, սոցիալ-տնտեսական, հասարակա-

¹⁴ Տե՛ս «Երկիր», 2005, հոկտեմբեր 14, # 38/1860:

¹⁵ Տե՛ս «Հայոց աշխարհ», 2005 թ., սեպտեմբերի 3, տե՛ս նաև «Հայկական ժամանակ», 2002, հունվարի 16:

¹⁶ Տե՛ս «Ռուսաստան հայրենասերների ողբը», «Հայկական ժամանակ», 2002, հունվարի 26, տե՛ս նաև «Առավոտ», «Հասարակական մեծ համաձայնագիր», 2003թ., հուլիսի 3, «Լինեի չորան ԱՄՆ-ում հեռու», «Հայկական ժամանակ», 2003 թ., օգոստոսի 23, «Նստելը մի այիբ է, իջնելը՝ երկու» «Առավոտ», 2007, մայիս 1,79/2945/1, **Գալաջյան Ռ.**, Արտաքին և ներքին վերադասավորումներն արագանում են, «Իրավունք», 2006, թիվ 2(1208), հունվարի 13-19, **Ջրաջո**, ճանճ և իշխանություն քշելու թունդ ժամանակներ, «Իրավունք», 2006, թիվ 2(1208), հունվարի 13-19, **Սասունյան Ռ.**, Հայերը պետք է զիջումներ կորզեն թուրքիայից, «Երկիր», 2005, հոկտեմբերի 14, # 38/1860/ և այլն:

¹⁷ Տե՛ս «Հայկական ժամանակ» օրաթերթ, 2009թ., նոյեմբերի 27:

կան-քաղաքական, դատաիրավական, առանձին դեպքերում փորձ է արվում նաև հարմարվողականության դեմ պայքարի եղանակներ առաջարկել: «Ազգ» օրաթերթը, անդրադառնալով ամենաթողությանը, որ նկատվում է իրավապահ համակարգում, երևույթը դիտում է որպես հետևանք ոստիկանական կամայականությունների հանդեպ հասարակական անտարբերության ու հարմարվողականության, այդ կամայականությունները կանխելու որոշակի քայլեր չձեռնարկելու: «Ոստիկանների դաժանությունն ու մարդկանց անտարբերությունը» հոդվածում հեղինակը ներկայացնում է երևույթի լրջագույն վտանգները և ամփոփում. «Ավելորդ չեմ համարում ամեն դեպքում հիշեցնել, որ անտարբերությունը վտանգավոր է բոլորիս համար: Այնպես որ, անտարբեր լինելով, մենք նախ և առաջ թույլ ենք տալիս սպանել մեզ, ապա այն ամենը, որ կա մեր շուրջը»¹⁸:

Հասարակական իդեալի ճգնաժամից ածանցված վիճակ է հասարակության շրջանում գերիշխող կարոտախտը: Այս իրավիճակը կարող է բազմաթիվ բացասական երևույթների պատճառ դառնալ: Օրինակ՝ կարոտախտով համակված հասարակությունը ծանր ու անորոշ ներկայի համար մեղավոր է համարում ժողովրդավարությանը, անկախությանը, մասնավոր սեփականությունն ու բարեփոխումներն ընկալում որպես «երկրի վաճառք», «թալան», միջազգային ու տարածաշրջանային ինտեգրացումը՝ կախյալ ու դիմազուրկ գոյություն, գլոբալ մշակույթի մեջ ազգայինի տարրալուծում: «Ի գորու չլինելով բանական քննության ենթարկելու և զնահատելու առկա քաղաքակրթական կացությունը՝ հանրույթն օտարվում է, տեղի է ունենում «փախուստ իրականությունից»¹⁹: Հետխորհրդային հասարակությունների հիմնական ընդհանրություններից է այն, որ դրանց բոլորին բնորոշ է իդեալների համակարգի գլխիվայր շրջում²⁰: Այս իրողության վրա հիմնվելով՝ տեսաբաններն ահազանգում են փոխակերպվող հասարակություններում նկատվող «մշակութավախություն» երևույթի մասին²¹: Երևույթն ունի տարբեր դրսևորումներ, որոնք լայնորեն լուսաբանվել են արդի հայ մամուլում, և որտեղ հաճախ կարելի է հանդիպել «պալատական մտավորականություն», «պալատական մշակույթ», «իշխանություններին հաճոյացող մտավորականներ» և նման արտահայտությունների: Հետխորհրդային հասարակությունների հիմնական ընդհանրություններից է այն, որ դրանց բոլորին բնորոշ է իդեալների համակարգի գլխիվայր շրջում²²: Այս իրողության վրա հիմնվելով՝ տեսաբաններն ահազանգում են փոխակերպվող հասարակություններում նկատվող «մշակութավախություն» երևույթի մասին²³: «Իրավունք» թերթը երևույթին անդրադառնում է անկախ երկրում գործառույթ հասարակական հարաբերությունների դիտանկյունից: Պարբերականը, մատնանշելով հանրապետությունում առկա իմաստախնդիրները, դրանում մեղադրում է նաև մտավորականությանն ու հոգևորականությանը լռության ու անտարբերության համար: Մասնավորապես գրում է. «Հիմա թող մեր պնակալեզ մտավորականները «կլուկտիվ» ստորագրահավաք անեն ու պաշտպանեն իրենց ճիվաղին ու կրիմինալին:

¹⁸ Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 2003թ., հոկտեմբերի 14:

¹⁹ Տե՛ս **Полибий**, *Всеобщая история в сорока книгах*, М. 1999, стр. 145.

²⁰ Տե՛ս **Սողոմոնյան Գագիկ**, *Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները*, Երևան, 2005, էջ 158:

²¹ Տե՛ս նույն տեղում:

²² Տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս նույն տեղում:

Հիմա էլ, երբ ժամանակն է մարդկանց ուղի հանելու «վասն հայրենյաց, վասն հավատոյ», դրա հոգևոր պարտականություն ունեցողները լռում են»²⁴: Պարբերակա- նը ակնհայտորեն խնդիրը լուսաբանել է միակողմանի. չկա հիմնախնդրի քննութ- քան մյուս կողմը՝ որտեղի՞ց է այդ անտարբերությունն առաջացել և հիշված բնա- գավակնի ներկայացուցիչները ի՞նչ դրդապատճառներից ելնելով են այդպիսի կեց- վածքով հանդես գալիս: Բայց կան նաև զնահատանքի արժանի հրապարակում- ներ, որոնք առանձնանում են և՛ երևույթների օբյեկտիվ, բազմակողմանի լուսաբանմամբ, և՛ հավասարակշռվածությամբ: «Ազգ» օրաթերթն ազգային մշա- կույթի, գաղափարախոսության պահպանման հարցերին իր հրապարակումներում շատ է անդրադարձել: Որոշ հոդվածներում պարբերականն ահազանգում է մեր՝ ազգային արմատներից հեռանալու և նյութական արժեքներից անմնացորդ տրվե- լու մասին և կատարում սուր ու կտրուկ ընդհանրացումներ՝ պահպանելով հավա- սարակչի կեցվածքը²⁵: Պալատական կոչված մշակույթի առաջացման հիմքերը թաքնված են ոչ միայն սոցիալ-տնտեսական, միջանձնային, հոգեբանական, այլև հասարակական-քաղաքական հարթություններում: Վտանգավոր է կեղծ վերնա- խավի գոյությունը մեր հասարակության մեջ: Այդ կեղծ վերնախավը հասարակա- կան գիտակցությունը «լցնում է» արհեստական իդեալներով, խեղաթյուրում հա- սարակական կարծիքը: Մամուլին այս հարաբերությունների հստակեցման, հասա- րակական գիտակցության առողջացման առումով մեծ դերակատարություն է վստահված: «Ազգ» օրաթերթը մշված իրավիճակի հիմնական պատճառը տեսնում է նրանում, որ մշակույթի գործիչները հասարակական արատավոր երևույթների դեմ պայքարի միասնական ծրագիր չունեն, այլ լուծում են նեղ անձնական հարցեր²⁶: «Հայոց աշխարհ»-ն այս խնդիրներից խուսափելու համար կարևորում է մտավոր- ականի պաշտպանված լինելու անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ թեր- քը վկայակոչում է անվանի երգահան Ռոբերտ Ամիրխանյանի խոսքերը. «Ամեն ինչ կանեի, որ արվեստագետը պաշտպանված լիներ մեր երկրում, բայց ոչ թե սեփա- կան տունը վճառելու գնով: Միայն պատկերացրեք, թե նախկինում ինձ քանի մարդ, մեծահարուստներ են առաջարկել միության շենքը դարձնել ռեստորան, կազինո: Զրույցներ են եղել շենքը դեսպանատան տրամադրելու վերաբերյալ, բայց նման գաղթակղիչ առաջարկները միշտ մերժել են»²⁷: Հենց այս հանգաման- քից էլ բխում է այն, որ մեր հասարակության մեջ փոխվել են գերիշխող իդեալ- ները: Այժմ հասարակությունը հիմնականում ուղղորդվում է սեփական «ես»-ի շուրջ պտտվող իդեալներով, առաջնորդվում նյութական շահախնդրությամբ: Դրա հետևանքով առաջանում է «հոգեբանական աղքատություն» երևույթը, երբ «հա- սարակությունը փորձում է ամուղել ինքն իրեն, որ ամեն ինչ վատ է, ժողովուրդը վերանում է, երկիրը կործանվում է»²⁸: Այլ խոսքով՝ հասարակության մեջ աստիճա- նաբար ազգային արժեքների զգացողությունը տեղի է տալիս նյութական ու կեն- սական շահերին: «Ժամանակ» օրաթերթն այս համատեքստում ազգային արժեք է համարում նաև ազատ արտահայտվել թույլ տվող մամուլը, բայց նաև քննադա- տաբար նշում, որ «մեզանում ազգային արժեքների զգացողությունն իսպառ բա-

²⁴ Տե՛ս «Իրավունք», 2006 թ., հոկտեմբերի 20-26, 79 (1344):

²⁵ Տե՛ս «Ազգ», 2008, նոյեմբերի 28:

²⁶ Տե՛ս «Ազգ», 2005, սեպտեմբերի 23:

²⁷ Տե՛ս «Հայոց աշխարհ», 2006, ապրիլի 8, #64/2127:

²⁸ Տե՛ս «Հայոց աշխարհ», 2005, ապրիլի 8, #63/1886:

ցակայուն է»²⁹։ Հետխորհրդային, ինչպես նաև անցումային բոլոր հասարակություններին բնորոշ է իդեալների համակարգի գլխավայր շրջում, ինչը նկատվում է նաև հայ հասարակության շրջանում։ Վերափոխումները հաշվի առնելով՝ մամուլ-հասարակություն-իշխանություն կապի նոր հարաբերակցության պայմաններում արդիական է դառնում այն հարցը, թե այս կարգավիճակում գտնվող արդի հայ մամուլը ներկայացնող պարբերականներն ինչ համատեքստում պետք է դիտարկեն հասարակական իդեալի փոխակերպումները, և որոնք էին լինելու այն հիմնական իդեալները, որ մամուլը պետք է ներարկեր հասարակությանը՝ անցումային ժամանակաշրջանին բնորոշ հասարակական ճգնաժամից դուրս գալու համար։

Գլուխ երրորդ Ժողովրդավարական իդեալների տարածումը՝ որպես հասարակական իդեալի ճգնաժամը հաղթահարելու ճանապարհ

Երրորդ գլուխը բաղկացած է 3 ենթագլուխներից։ «**Ժողովրդավարություն» հասկացության ընկալման փոփոխությունները հասարակության մեջ և արդի հայ մամուլում**» ենթագլխում անդրադարձ է կատարվում ժողովրդավարության մասին պատկերացումներին, որոնք արդի հայ հասարակության շրջանում անկախությունից հետո փոփոխվել են։ Ժողովրդավարության անցումային փուլում ի հայտ են գալիս տարբեր հիմնախնդիրներ։ Հայ հասարակության ժողովրդավարացման ճանապարհի դժվարություններն ու նոր արժեքներն ընդունելու հետ կապված խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ է ժողովրդավարացման կոնկրետ մոդելի քննարկումը, ընդ որում՝ պետք է տեսադաշտում ունենալ նաև ժողովրդավարության ճանապարհի հիմնախնդիրների վերաբերյալ արևմտյան վերլուծաբանների ուսումնասիրությունները³⁰։

Սամուլի ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ում ժողովրդավարության անցման փուլը պահանջում է որոշակի ժամանակ, գիտելիքներ, փորձ, սահուն սերնդափոխություն։ Հայաստանում ժողովրդավարական կուռ, ամբողջական և առողջ, կայուն քաղաքական համակարգի ապահովման համար անհրաժեշտ է, որ այն հիմնված լինի ազգային գաղափարախոսության, արժեհամակարգի և մշակույթի վրա։ Փոխվել են նաև ժողովրդավարություն հասկացության նկատմամբ հասարակական ընկալումները։ Եթե 1990-ականների սկզբին, երբ ՀՀ-ն անկախություն ձեռք բերեց, ժողովրդավարությունը նպատակ էր, ապա այժմ այն դարձել է միջոց՝ հասարակությունում գոյություն ունեցող արատավոր երևույթների հաղթահարման համար։ Ժողովրդավարության անցման փուլում հիմնախնդիրների մեծամասնությունն առաջանում է հատկապես այն պատճառով, որ տեղի է ունենում «պալատական հեղաշրջում»³¹, այլ խոսքով՝ «հեղաշրջում վերևից», երբ

²⁹ Տե՛ս «Ժամանակ», 2008, մայիսի 20, 82 (1324)։

³⁰ Տե՛ս Elites and Democratic Consolidation in Latin America and Southern Europe (edited by John Higley and Richard Gunther), Cambridge University Press, 1992, Political Elites and Political Development in Middle East (edited by Frank Tachau), New York-London-Sydney-Toronto: Political Culture and democracy in developing countries (edited by Larry Diamond), Boulds and London, 1993.

³¹ Տե՛ս Linz J.J., Stepan A., Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America and Post Communist Europe, Baltimore, 1994.

գործում է ժողովրդավարությունը հասարակությանը պարտադրելու սցենարը: Այս հիմնախնդիրն անդրադարձել է Դ. Գալաջյանը «Իրավունքի» «Ինչ է կատարվում վերնախավում» խմբագրականում: Հեղինակի քննադատության հիմնական թիրախը հասարակությունից գաղտնի վերնախավային որոշումներն են, երկրի հետագա զարգացման ճանապարհի ուղեցույցը, կադրային քաղաքականությունը՝ առանց հասարակական կարծիքը հաշվի առնելու³²:

«Հրապարակը» վերնախավում առկա խնդիրները կապում է այն փաստի հետ, որ իշխանության ներկայացուցիչների մեծամասնությունն օգտվում է նույն «կերակրատաշտից»³³: «Հայկական ժամանակ»-ը, անդրադառնալով նույն խնդիրներին, դրանց լուծման ճանապարհ է դիտում իշխանափոխությունը. «Մենք ունենք ամենակարևորը՝ բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման խնդիր, որը հնարավոր է լուծել միայն իշխանափոխությամբ»³⁴:

Մերօրյա հասարակության համար լուրջ մարտահրավեր է նաև մշակույթի զանգվածային արտադրանքը, որ ստեղծվում ու տարածվում է ՋԼՄ-ներով: Օրինակ՝ ցածրարժեք ֆիլմաշարերը, ձայնային ու տեսաերիզային կասկածելի արտադրանքը, զվարճալի ծրագրերի կապկումը ձևավորում են պարզունակ ու մակերեսային, արժեքային ցածր կողմնորոշումներով ու պահանջմունքներով շուկայական անհատ, որը պատրաստ է լինելու այն, ինչի պահանջարկ կա: Այս միտումները մեր հասարակության համար առավել վտանգավոր են, քանի որ տարածվում են մի պետությունում, որը ժողովրդավարական գործընթացների թևակոխման ճանապարհի սկզբին է:

Հաջորդ ենթագլխում՝ **«ժողովրդավարական իդեալների տարածումը՝ հասարակական իդեալի ճգնաժամից ելքի հիմնական միջոց»** կարևորվում է ժողովրդավարական գործընթացների դերակատարությունը հասարակական իդեալի ձևավորման գործում: Հասարակության ժողովրդավարացումը՝ որպես արժեք և ժողովրդավարական իդեալներն այն հիմնական միջոցներն են, որոնց արմատավորման շնորհիվ հնարավոր կլինի դուրս գալ հասարակական իդեալի ներկայիս ճգնաժամային իրավիճակից: Սակայն որպեսզի հասարակական գիտակցությունը զոհ չգնա կեղծ ժողովրդավարական իդեալներին, անհրաժեշտ է որդեգրել, այսպես կոչված, «իդեալական սկզբունքներ»³⁵, որոնց իրագործման շնորհիվ կարելի է հասնել իրական ժողովրդավարական գործընթացների: Այդ սկզբունքներից են արդյունավետ մասնակցությունը հասարակական կյանքին, այսինքն՝ քաղաքացիները պետք է ունենան հավասար հնարավորություններ՝ իրենց կարծիքն արտահայտելու, քվեարկության հավասարության սկզբունքը, «օրակարգի» նկատմամբ վերահսկողությունը, քաղաքական գործընթացներում քաղաքացիների ընդգրկվածության ապահովումը և այլն: Ժողովրդավարական սկզբունքների տարածման և հասարակական կարծիքի ձևավորման համար շատ լծակներ ունեն հատկապես լրատվամիջոցները: Տարբեր փորձագետներ ժողովրդավարական գործըն-

³² Տե՛ս «Իրավունք», 2008, հուլիսի 4-7, # 52 (1539):

³³ Տե՛ս «Հրաժարվել կերակրատաշտից», «Հրապարակ», 2008, օգոստոսի 14, N115:

³⁴ Տե՛ս «Իշխանափոխությունն անխուսափելի է», «Հայկական ժամանակ», 2002, ապրիլի 6, #60:

³⁵ Տե՛ս **Даль Р.**, Демократия и ее критики//Перевод с английского под ред. М. В. Ильина, 2003, стр. 357-359. Դալը մշակել է «պոլիարխիայի տեսությունը», որտեղ փորձում է ցույց տալ իրական ժողովրդավարության և նրա իդեալի միջև գոյություն ունեցող տարբերությունները:

թացների զարգացումը Հայաստանում միանշանակորեն կապում են մամուլի ազատության՝ որպես իդեալի ամրագրման հետ³⁶: Մամուլի ազատության հիմնախնդիրը լայնորեն քննարկվել է մամուլում: «Հրապարակ» օրաթերթը հասարակական իդեալի ճգնաժամի հաղթահարման գործում կարևոր դեր է վերապահում ազատ ու անկախ մամուլին, բայց նաև վեր է հանում մամուլի ազատությունը խոչընդոտող հիմնախնդիրները: «Մեր տիպի երկրներում ընդհանրապես հնարավոր չէ մամուլի ազատ ու անարգել աշխատանքը: Ազատ մամուլի զարգացման իրական խոչընդոտ է դառնում ֆինանսական խնդիրը: Եթե մամուլը պետական աջակցության չի արժանանում, հարկերից ու տուրքերից չի ազատվում, տպագրության համար անհրաժեշտ թղթի գինն առասպելական է, տպագրական ծախսերը՝ ահռելի, ինչպես՝ կարող է անկախ մամուլը կայանալ»³⁷: Պարբերականներում հաճախ է արծարծվում այս հարցը, թե մամուլը չի կարող կոչվել ազատ, քանի դեռ կախման մեջ է մի շարք գործոններից՝ սկսած հովանավորչությունից մինչև անձնական շահերի հակամարտությունը: Այս առիթով «Առավոտ»-ի գլխավոր խմբագիր Ա. Աբրահամյանը ուշադրություն է հրավիրում այն հիմնական պատճառների վրա, որոնք խոչընդոտում են ազատ մամուլի իդեալի կայացմանը: «Ազատ մամուլը Հայաստանում չի կարող վերջնականապես կայանալ, քանի որ դրա համար մի շարք արհեստական խոչընդոտներ են ստեղծված: Հայաստանում տպագիր ՁԼՄ-ները չեն կարող ինքնաբավ լինել, հետևաբար յուրաքանչյուր խմբագիր ստիպված է գործ ունենալ ինչ-որ հովանավորների հետ: Այսօրվա գործարարները, որոնք մեծապես կախված են իշխանությունից, իրենց թույլ են տալիս հովանավորել միայն այն թերթերին, որոնք այս կամ այն կերպով կատարում են իշխանության կամքը»³⁸:

Երրորդ գլուխը եզրափակվում է «**Քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ հասարակական իդեալի ճգնաժամային իրավիճակին հակակշռող գործոն**» ենթագլխով: Անդրադարձ է կատարվում հայ հասարակության շրջանում քաղաքացիական հասարակության ձևավորման ավանդույթներին, տարածված մոդելներին: Մերօրյա տեսաբանները քաղաքացիական հասարակությունը սահմանում են հասարակության կենտրոնական արժեք դիտարկելով անօտարելի իրավունքներ ունեցող քաղաքացուն: Ժողովրդավարական իդեալների ներգործությունը հասարակական կարծիքի ձևավորման վրա նպաստում է քաղաքացիական հասարակության ձևավորմանը: Արդի հայ մամուլում այդ մասին հոդվածներ են լույս տեսել, որոնց հեղինակներն իրենց հրապարակումներում քաղաքացիական հասարակության ձևավորման գործում հատկապես կարևորում են խոսքի, ազատ կամարտահայտման և արդարադատության ինստիտուտների կայացման հարցը³⁹:

³⁶ Տե՛ս «Հրապարակ», 2011, հոկտեմբերի 16. «Ժողովրդավարություն և ընտրական գործընթացներ» միջազգային կենտրոն ՀԿ-ի նախագահ Անանիա Մաղաքյանը պարբերականի էջերում կարծիք է հայտնում, թե այլ լակնուսի թուղթ, քան մամուլն է, որը կարողանա շարունակաբար արտապատկերել երկրում ընթացող բոլոր գործընթացները և իրագրելի հանրությանը, ներկայումս գոյություն չունի:

³⁷ Տե՛ս «Ֆինանսական անկախություն», «Հրապարակ», 2008, օգոստոսի 22, N121:

³⁸ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Թերթ կարդալը էլիտար զբաղմունք է, «Առավոտ», 2003, մայիսի 4, տե՛ս նաև «Բավարարության ճիշտ ժամանակն է», «Հայոց աշխարհ», 2003, մայիսի 3: ՁԼՄ-ների մեծամասնության ընտրությունների լուսաբանման ժամանակ հակառակ ճամբարում գտնվող իրենց գործընկերների վրա ցեխ շարտելու միտումը պարբերականը հակադրում է մամուլի ազատության իդեալին:

³⁹ Տե՛ս «Առավոտ», 2004, մայիսի 24, 100/2234:

Մեծ թվով հրապարակումներ նվիրված են խոսքի ազատության իրավունքի ոտնահարման նախադեպերին⁴⁰: Մեր հանրապետությունն այժմ հայտնվել է սոցիոնշալիստական մի իրավիճակում, երբ նախկին սոցիոկենտրոն հասարակությունն արդեն գոյություն չունի, բայց միևնույն ժամանակ մարդակենտրոն, քաղաքացիական հասարակությունը իրականում դեռ ձևավորված չէ: Ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար մեծ դերակատարություն ունի միասնական արժեհամակարգի հոգևոր և աշխարհընկալման ամբողջական դաշտի ստեղծումը: Դատելով մամուլի հրապարակումներից՝ ժողովրդավարական համակարգի՝ դեպի քաղաքացիական հասարակություն աստիճանական անցման շրջանում նկատվում է գաղափարների և աշխարհայացքային դրսևորումների առատություն: Առաջին հայացքից այդ իրավիճակը կարող է քաղաքական խառնաշփոթի տպավորություն թողնել: Բայց դա ավելի շատ վկայում է բազմակարծության մասին: Նման իրավիճակը հաճախ ընդունված է անվանել բաց քաղաքականություն, գաղափարական ընտրության հնարավորություն:

Հայաստանյան հասարակության զարգացման ներկա փուլում նկատվում են քաղաքացիական հասարակության կայացման որոշ նախանշաններ: Դրա վկայությունն է հանրապետությունում տեղի ունեցող վերջին իրադարձություններին քաղաքացիական ակտիվիստների արձագանքը. մասնավորապես՝ այն քաղաքացիական շարժումները, որոնք սկիզբ առան հասարակության դժգոհությունը բարձրացրած մի շարք խնդրահարույց հարցերի շուրջ՝ տրամապորտի ուղեվարձի թանկացման, Փակ շուկայի, Թեղուտի բնապահպանական խնդիրներ և այլն:

Մերօրյա մամուլը լայնորեն արձագանքում է այս շարժումներին: Ընդ որում՝ միևնույն հիմնախնդրի լուսաբանումը կատարվում է տարբեր դիտանկյուններից՝ կախված նրանից, թե տվյալ լրատվամիջոցն ինչպիսի գաղափարական և քաղաքական սկզբունքների է դավանում: Հրապարակումների այսպիսի բազմազանության մեջ ըստ ելության երևում են քաղաքացիական շարժումների նպատակը, դրանց անդամների շարժառիթները և ընդհանուր առմամբ՝ քաղաքացիական հասարակության ձևավորման ծիլերը հայ հասարակության շրջանում⁴¹: Խորհրդային պայսիվ, հարմարվող քաղաքացուն «Առավոտը» հակադրում է մեր օրերի «Նախաձեռնողական ջահելությանը»⁴²: Քաղաքացիական շարժումների հեռանկարի և հետագա ընթացքի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնում իշխանամետ համարվող «Հայոց աշխարհը»: «Քաղաքացիականի հետցնցումային քաղաքականացումը» հողվածում կարդում ենք. «Մինչև այժմ հստակ քաղաքացիական շարժման շրջանակներում ծավալված պայքարը կոնկրետ ուժի կողմից փորձ է արվում տեղափոխել հստակ քաղաքական հարթություն: Միանգամայն տրամաբանական

⁴⁰ Տե՛ս «Առավոտ», 2004, հունիսի 2, 103/2237:

⁴¹ Տե՛ս «Երևանում, ինչպես Ռիո դը Ժանեյրոյում», «Ազգ», 2013, հուլիսի 23, #125, տես նաև «Լրագրողին սպառնացել են ուղեվարձի թանկացման դեմ ակցիան լուսաբանելու ժամանակ», «Առավոտ», 2013, հուլիսի 22, տես նաև «Մի խանգարեք քաղաքացիական լուսավոր շարժմանը», «Առավոտ», 2013, հուլիսի 25, «Ուղեվարձի թանկացումն անօրինական է. իրավապաշտպան ԿԿ», «Առավոտ», 2013, հուլիսի 24, «Քաղաքացիականի հետցնցումային քաղաքականացումը», «Հայոց աշխարհ», 2013, հուլիսի 25, «Հրապարակ», 2013, հուլիսի 23, «Կրիմիանը ներխուժել է քաղաքացիության», «Երկիր», 2013, նոյեմբերի 6, «Ազգ», 2012, փետրվարի 17, #30, տես նաև «Ոչնչացման է ենթակա Թեղուտի անտառի 95 տոկոսը», «Ազգ», 2012, նոյեմբերի 11:

⁴² Տե՛ս «Այս ամառը շատ էինք երագել», «Առավոտ», 2013, օգոստոսի 13:

և օրինաչափ է, որ տեղափոխման նախաձեռնողն ավագանու միակ ընդգծված ընդդիմադիր խմբակցությունն է»⁴³: Վերոնշյալ հրապարակումների համեմատական վերլուծությունը վկայում է, որ հայ հասարակության շրջանում ի հայտ են եկել քաղաքացիական հասարակության ձևավորման լուրջ նախանշաններ: Եվ փաստ է այն, որ հասարակական իդեալի գոյություն ունեցող ճգնաժամից ելքի հիմնական ճանապարհ կարող է դառնալ հենց քաղաքացիական հասարակության կայացումը: Ժամանակակից երիտասարդ քաղաքացին, որն ապրում է ազատության, անկախության իդեալներով, հակադրվում է խորհրդային քաղաքացուն, ում ընդհանուր գծերով բնորոշ էին վախը, զգուշավորությունը, երբեմն նաև՝ անտարբերությունը: Մեր հասարակության շարժիչ ուժը սկսում է դառնալ այդ հատվածը, որի անդամներն իրենց ակտիվությամբ ու համախմբված պայքարով ուրվագծում են քաղաքացիական հասարակության տեսլականը:

Ատենախոսության վերջին՝ **«եզրակացումներ»** բաժնում ներկայացված են մեր ուսումնասիրության հիմնական արդյունքները:

1. Իդեալը հասարակական գիտակցության և դրա հետագա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի և կարող է պետական տեղեկատվական քաղաքականության ու ռազմավարության վճռորոշ բաղկացուցիչ դառնալ: Մտահոգիչ է այն, որ հասարակական իդեալի մասին խոսք չկա ՀՀ Սահմանադրության մեջ, ՀՀ քաղաքական կուսակցությունների ծրագրերում. թերևս որոշ անդրադարձեր առկա են ՀՀ անկախության հռչակագրում: Չկանոնակարգված այս իրավիճակում հասարակական իդեալները ստորադասվում են, հայտնվում երկրորդական դիրքերում:

2. Հասարակական իդեալների փոխակերպման հիմնական պատճառները համակարգային են, քանի որ 20-րդ դարի վերջին տասնամյակները բեկումնային էին: Իդեալների գլխիվայր շրջման պատճառով լուրջ փոփոխությունների է ենթարկվում նաև հասարակական գիտակցությունը, որ հիմնված է հասարակական կարծիքի վրա:

3. Հասարակական իդեալի փոխակերպման պատճառները կապված են նաև գլոբալացման գործընթացների հետ: Դրանք արագ տեմպերով ներթափանցում են հասարակական կյանքի տարբեր ոլորտներ և նկատելի են ողջ աշխարհում: Հայաստանը ևս անմասն չէ այդ զարգացումներից: Լինելով հետխորհրդային, անցումային փուլում գտնվող երկիր՝ մեր հանրապետությունն ավելի զգայուն է նման երևույթների նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետությունում նկատվում է ժողովրդագրական սրված իրավիճակ՝ տնտեսական խնդիրներ, բարոյականության նվազում, սոցիալական և հոգևոր ուղրտներում հետընթաց, կոռուպցիոն երևույթներ և այլն: Հայ հասարակությունը մի կողմից ձերբազատվել է խորհրդային իդեալներից, սակայն դեռ լիովին չի ընդունել նոր իդեալները: Այս պարագայում կենսական նշանակություն ունի սոցիալական այնպիսի միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն կտա պատմականորեն ձևավորված հայ ազգային կենսակերպը կապել այն հասարակական իդեալների հետ, որոնք անհրաժեշտ են առողջ ազգային հոգեբանություն ստեղծելու համար:

5. Դատելով հայաստանյան ՁԼՄ-ների հրապարակումներից՝ կարելի է նկատել, որ հակամարտություն է գնում երկու տարբեր հասարակական իդեալների մի-

⁴³Տե՛ս «Քաղաքացիականի հետցնցումային քաղաքականացումը», «Հայոց աշխարհ», 2013, հունիսի 25:

ջև: Մեկը ավանդականն է, որ գերադասում է հասարակական գաղափարների իրագործումը սոցիալական արդարության, ուժեղ պետականության ճանապարհով: Մյուսը ժամանակակիցն է, որ նախընտրում է իշխող ընտրախափ պահանջումը: Երբ բավարարումը դասական լիբերալիզմին բնորոշ գաղափարների միջոցով որքան կարելի է ավելի հարուստ լինել, հեռու մնալ հասարակական վերահսկողությունից, կորպորատիվ բարոյականությունը և այլն:

6. Հայ հասարակության մեջ գերիշխող են օտարի և յուրայինների իդեալները, երբ հասարակական տարբեր շերտեր միմյանց հետ փոխհարաբերություններում շեշտադրումը կատարում են «մենք»-ի և «դուք»-ի շրջանակներում: Մեծացել է հասարակական անտարբերությունը, երբ անհատը չի գգում այն պատասխանատվությունը, որ ինքը կարող է ինչ-որ բան փոխել կամ որոշել: Այս իդեալների գերակայությունն էլ հասարակության լայն շրջանակների մոտ ծնունդ է կարոտախտ հին հասարակարգի նկատմամբ: Նյութական արժեքների պաշտամունքը օրեցօր ընդլայնում է իր ծավալները: Այն ներթափանցել է նաև մշակույթի ոլորտ: Լրատվամիջոցները ահագանգում են նյութական և պալատական մշակույթի ձևավորման մտահոգիչ փաստի մասին:

7. Վերափոխումների հետևանքով Հայաստանում մամուլ-հասարակություն-իշխանություն կապի նոր առանձնահատկություններ են ձևավորվում: Մերօրյա մամուլը երբեմն հասարակական երևույթները օբյեկտիվ քննություն չի ենթարկում կամ անտեղի սրում է իրավիճակը՝ այդ կերպ հասարակության շրջանում ավելորդ տագնապ հարուցելով: Մամուլում հասարակական կարևորություն ներկայացնող շատ հարցերի լուսաբանման միակողմանիություն է նկատվում:

8. Ներկայումս հայաստանյան ՁԼՄ-ները թևակոխել են նոր՝ էլեկտրոնային շրջափուլ, երբ տպագիր մամուլը հետընթաց է ապրում՝ իր տեղը զիջելով էլեկտրոնային լրատվամիջոցներին, ինչը համակողմանի ուսումնասիրության կարիք ունի, քանի որ էլեկտրոնային լրատվամիջոցների զարգացումը նպաստում է թե՛ հասարակական իդեալների փոխակերպումներին, թե՛ այդ գործընթացի արդյունքում նոր՝ հատկապես ժողովրդավարական իդեալների ձևավորմանը:

9. Հասարակության ժողովրդավարացումը՝ որպես արժեք, և ժողովրդավարական իդեալներն այն հիմնական միջոցներն են, որոնց արմատավորման շնորհիվ հնարավոր կլինի դուրս գալ հասարակական իդեալի ներկայիս ճգնաժամային իրավիճակից: Արդի հայ հրապարակախոսությունը ՁԼՄ-ների միջոցով փորձում է ձևավորել ժողովրդավարության նորովի ըմբռնում, այն է՝ չմերժելով արևմտյան ժողովրդավարության հիմնարար արժեքները՝ հրաժարվել դրա որոշ հռոչի դրսևորումներից: Գոնաժամային այս իրավիճակից ելքի ճանապարհ է պետական տեղեկատվական քաղաքականության իրականացումը, միասնական տեղեկատվական դաշտի ստեղծումը, մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների, մասնավորապես ազատ կամարտահայտության իրավունքի ապահովումը:

10. Հայաստանյան հասարակության զարգացման ներկա փուլում նկատվում են քաղաքացիական հասարակության կայացման որոշ նախանշաններ: Դրա վկայությունն են հանրապետությունում տեղի ունեցող վերջին իրադարձությունների հանդեպ քաղաքացիական ակտիվիստների համարժեք գործողությունները և մամուլում դրանց լայն արձագանքը, մասնավորապես՝ այն քաղաքացիական շարժումները, որոնք սկիզբ առան հասարակության դժգոհությունը բարձրացրած մի շարք խնդրահարույց հարցերի շուրջ՝ տրանսպորտի ուղեվարձի թանկացման, Փակ շուկայի, Թեղուտի բնապահպանական խնդիրներ և այլն: Ձևավորվել է քա-

ղաքացու նոր կերպար, որն իր պատկերացումներով ու գործունեությամբ որակապես տարբերվում է խորհրդային քաղաքացուց: Ուստի այս հիմքի վրա նոր գործառույթներ իրականացնող քաղաքացիական հասարակությունն այն հակակշիռն է, որ կարող է ձևավորվել մեզանում՝ որպես հասարակական իդեալի ճգնաժամի հաղթահարման միջոց:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

1. **«Իդեալագուրկ» հասարակություն, կամ ո՞ւր են տանում հասարակական իդեալի փոխակերպումները**, «Գարուն», գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական անկախ ամսագիր, թիվ 9-10, 2011թ., էջ 46-50:

2. **Տեղեկատվությունը՝ հասարակական նոր իդեալների կերտման միջոց**, «Գարուն», գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական անկախ ամսագիր, թիվ 11-12, 2011 թ., էջ 7-10:

3. **Հասարակական իդեալի ճգնաժամը արդի հայ մամուլում**, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1(637), 2013 թ., էջ 203-210:

4. **Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորումը հասարակական իդեալի ճգնաժամի հաղթահարման ճանապարհ**, «Հայագիտական հանդես», թիվ 1(25), 2014թ., էջ 185-194:

Арутюнян Татевик Овсеповна

“Идеалы общества и ее трансформация в постсоветской армянской прессе”

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности “Журналистика”.

Защита состоится 24 декабря на заседании Специализированного Совета ВАК 012 при ЕГУ по адресу: г. Ереван, ул. Абовяна 52/А, ЕГУ, филологический факультет, аудитория 202.

Резюме

Диссертация посвящена изучению преобразования социальных идеалов в армянских постсоветских средствах массовой информации, и раскрытию взаимоотношений социально-политического развития с общественным идеалом. Исследование идеала общества зависит от некоторых факторов. Одним из основных факторов является тот факт, что, например, ни в РА Конституции, и ни в программах политических партий не встречается ни слово о социальном идеале. Есть некоторые ссылки в Декларации независимости РА.⁴⁴ Изучение переоценки социального идеала в современном обществе считается эффективным методом для выяснения источника проблем существующих в современном мире.

Научная новизна диссертации является попыткой изучить вопросы, связанные с социальным идеалом с точки зрения журналистики. Следовательно, наблюдения идеала социальной трансформации в СМИ помогут нам лучше понять социально-политические, этнические и идеологические процессы и полную картину изменений в общественном сознании. Изучение общественного идеала чрезвычайно актуально и современно, особенно когда в процессе современной глобализации Армения оказалась в критической ситуации духовных ценностей и уточнение идеалов необходимо, чтобы найти пути выхода из ситуаций.

Целью настоящей работы является изучение идеала общества в постсоветские годы, особенности его проявления, социальные и политические реалии в процессе формирования и тенденции развития на примере современных армянских СМИ. Процесс трансформации социального идеала изучен с точки зрения средств современных армянских СМИ. Мы изучили 18 электронных и печатных средств массовой информации. Мы изучили публикации изданий 2001-2014гг. Со второй половине 2000 года армянские СМИ вошли в электронную сферу, поэтому мы изучили деятельности наиболее отличившихся в интернет СМИ в этот период.

⁴⁴ Смотри «Республика Армения», 1991г., август 23, номер 179 (242).

Первая глава диссертации посвящена идеалу общества в контексте современной государственной политике. Рассмотрена концепция идеала и его определение. Идеал представлен как эффективный способ влияния на общество и мощное оружие информационной войны. Социальные изменения имеют большое влияние на переоценку идеала общества. В 1991 году Армения стала независимой и на глазах армянской общественности стали меняться многовековые традиции и национальные идеалы.

Вторая глава посвящена идеалу общественности и роли средств массовой информации в условиях кризиса. В отдельных анализах рассматриваются идеалы и анти-идеалы в сегодняшних СМИ. Исследование показывает, что армянское общество в настоящее время переживает кризис идеала. Причиной такой ситуации является то, что с одной стороны постсоветское армянское общество еще не избавилось от бывшей советской системы идеалов, а с другой стороны, до сих пор не полностью приняла новые идеалы. Мотивы идеалов общества четко отражаются в армянской прессе в период исследования 2001-2014гг. В настоящее время в кризисе Армянского общества доминируют социальная неопределенность и поиск. Серьезная необходимость для общества является вопрос на кого быть похожим. Доминируют идеалы “чужих” и “своих”, когда разные слои общества во взаимоотношениях друг с другом ставят акцент на “мы” и “другие”. Широко распространены апатия, ностальгия и анти-идеалы дворцовой культуры.

Третья глава посвящена способам преодоления кризиса идеалов. Автор считает, что этот кризис может быть преодолен, в частности распространения демократических идеалов, и особенно формирования гражданского общества. Важную роль в демократических процессах играет образование идеала общества. Исследование доказывает, что демократизация общества как ценность и демократические идеалы являются основным средством, с помощью которых возможно преодолеть нынешний кризис идеала. На современном этапе развития армянского общества, есть некоторые признаки образования гражданского общества. Об этом свидетельствуют последние события, происходящие в реакции активистов гражданского общества, особенно гражданские движения, которые начались с неудовлетворенности общественности. Сегодняшние СМИ широко реагируют на эти движения. Сравнительный анализ прессы свидетельствует о том, что в армянском обществе возникли серьезные признаки формирования гражданского общества. И это факт, что путь выхода из кризиса идеала общества, может стать основным способом для формирования гражданского общества. Современный молодой гражданин, который живет идеалом свободы и независимости, противопоставит советскому гражданину основные характеристики которого были страх, осторожность а иногда и равнодушие. Движущей силой нашего общества становится та часть общества, представители которой своей активностью и объединенной борьбой определяют видение гражданского общества.

Tatevik Hovsep Harutyunyan
“The social ideal and its transformations in post-Soviet Armenian society”

Dissertation for the degree of Candidate of Philology in “Journalism” speciality. Dissertation will be defended on December 24, at the meeting of the Specialized Council WAC 012 at YSU at Address: Yerevan, Abovyan 52/A, YSU, Faculty of Philology, the audience is 202.

SUMMARY

The dissertation is devoted to the research of the transformations of social ideal and the relations between socio-political developments and social ideal in post-Soviet Armenian society. The research of social ideal is based on several factors. First of all there isn't any remark about the social ideal neither in The Constitution the Republic of Armenia, nor in political programs of Armenian political parties. There are some remarks about social ideal in The Declaration of Independence of the Republic of Armenia.

The research of the transformations of social ideal is regarded as a productive way to reveal the basis of the problems in Armenian society. In this point of view the publications during 2001-2014 give a rich product for the research. The main issues of the publications during above mentioned period are not only connected with the transition from the old soviet system to contemporary one, but also with the process of looking for new ideals, with the problem of integration into new social system.

The scientific novelty of the dissertation is that it is the first attempt to research the issues connected with social ideal by journalistic approach. The research about the social ideal on the basis of the publications of above mentioned period helps you thoroughly understand socio-political, national-ideological processes and to get knowledge about the changes in public consciousness.

The relevance of the research in terms of concreting the ideals for overcoming the crisis of spiritual values in which Armenia is now because of the globalization processes is obvious.

The aim of the dissertation is to make research on the evolution of the developments of social ideal during post-Soviet period and to reveal socio-political new developments and tendencies of the transformations of social ideal. Generalizing the perspectives of various researchers in philosophy, sociology, psychology, journalism author argues that they all share the same opinion that the social ideal has a huge impact on public consciousness and the role of media is very important in the process of formation of social opinion. That is why the process of transformations of social ideal is researched on the basis of media publications during 2001-2014. 18 periodicals are on the basis of research. Especially is chosen this period because from the 2nd part of 2000s, the media entered a period which is called on-line media boom.

The first chapter of the thesis is devoted to the representation of social ideal on the context of information policy. The phenomenon, definition of ideal is represented. The social ideal is regarded as a productive way of controlling public opinion and a powerful weapon in information wars. The changes of the public system have great impact on the transformations of social ideal. The transformations of the traditional customs and national ideals began in 1991. The research of the publications show that there is a contradiction between two groups of social ideals: traditional and modern. Globalization processes which intruded into the all spheres of the public life also had huge impact on the transformation of social ideal. And we see the consequences of the transformation of social ideal in the examples of publications.

The second chapter is devoted to the crisis of social ideal and to the role of media. The features of media are represented on the context of socio-political changes. The main motives of social ideal which press represents are profoundly researched. These motives are more evidently seen during the important events for the nation: the independence of the Republic of Armenia, presidential elections, civil society movements. The results urge that nowadays Armenian society is in crisis of social ideal. The reason for this situation is that on one hand Armenian society hasn't still got rid of ideals which were typical to Soviet system, on the other hand, it hasn't thoughtfully got integrated into the modern system, into the modern ideals. The main motives of social ideals which are dominant in the publications during 2001-2014 are social undefinity, searching, deviding the society into "ours" and "yours". Indifference, nostalgia, "courtier culture" are also widely spread motives.

The third chapter is devoted to the ways of overcoming the crisis of social ideal. The author claims that one of the ways of overcoming the crisis of social ideal could be the spreading of democratic ideals and especially the formation of civil society. The reality is considered according to which the notions about democracy have been changed. The reasearch of media publications shows that the transition to the democratic system takes time, experience, knowledge. The formation of a healthy, static and democratic political system should be done on the basis of national ideology. So the role of social ideal and media is huge in this process. And the democratic ideals are the main tools due to which post-Soviet Armenian society will be able to overcome the crisis of social ideal.

In the current period of the development of society some symptoms of civil society are evident. For example the activities of civil society movements, the development of public activism against the problematic decisions of the government. One can meet a lot of publications on these kind of issues during the period of the research. The comperative analysis of the publications on the topic shows that the press is excited by these movements. The press contradicts the active modern citizen with the indifferent and cautious soviet citizen and emphasizes the fact that these kind of citizens form the capture of modern Armenian civil society, the formation and the development of which is the main way of overcoming the crisis of social ideals in post-Soviet Armenian society.

